ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶԻ ԵՂԵԳԻՍ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Վայոց Ձորի մարզի Եղեգիս համայնք
ՀՀ, Վայոց Ձորի մարզ, ք.Եղեգիս, (0281) 99282, shatin.vayotsdzor@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

07 ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 2023 թվականի N 282 Ա

ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ՀՈՂԱՄԱՍԻ ՎԱՐՁԱԿԱԼՈՒԹՅԱՆ 05/12/2023 ԹՎԱԿԱՆԻ ՄՐՑՈՒՅԹԻ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետի, 43-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետի, Հայաստանի Հանրապետության «Հողային օրենսգրքի» 48-րդ, 76-րդ հոդվածների և 78-րդ հոդվածի 1-ին մասի պահանջներով, հիմք ընդունելով Եղեգիս համայնքի ավագանու 27/10/2023թ. թիվ 139Ա որոշումը, Եղեգիս համայնքի մրցութային հանձնաժողովի 05/12/2023թ. արձանագրությունը

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ Ե Մ

1.Եղեգիս համայնքի Գողթանիկ գյուղի վարչական սահմաններում գտնվող համայնքային սեփականություն հանդիսացող գյուղատնտեսական նշանակության այլ հողատեսք, վարելահողը (կադաստրային ծածկագիր՝ 10-018-0125-0023, մակերեսը՝ 3,10879 հա, որից վարելահող 1,31724հա և այլ հողատեսք 1,79155հա) հողամասը 25 (քսանհինգ) տարի ժամկետով գյուղատնտեսական գործունեություն ծավալելու նպատակով վարձակալության տրամադրել մրցույթում հաղթող ճանաչված Գողթանիկ գյուղի բնակիչ Գարուշ Պողոսի Ղարիբյանին:

1)Հողամասի կադաստրային արժեքը կազմում է 338342 (երեք հարյուր երեսունութ հազար երեք հարյուր քառասուներկու) ՀՀ դրամ:

2)Տարեկան վարձավճարը սահմանել 21313 (քսանմեկ հազար երեք հարյուր տասներեք) ՀՀ դրամ, որը կազմում է տվյալ անշարժ գույքի հարկի տարեկան դրույքաչափի 1049 տոկոսը:

3)Յուրաքանչյուր ամսվա վարձավճարը կազմում է 1778 ՀՀ դրամ, որը պետք է մուծվի Եղեգիսի համայնքապետարանի 900 355 111 056 հաշվեհամարին:

4)Վարձավճարը վարձակալի կողմից մուծվում է հավասար չափերով՝ ըստ տարվա օրացույցային եռամսյակների, ոչ ուշ քան մինչև համապատասխան եռամսյակի վերջին ամսվա 20-ը:

5)3,10879 հա մակերեսով գյուղատնտեսական նշանակության այլ հողատեսքի անշարժ գույքի հարկի տարեկան դրույքաչափը կազմում է 2031 ՀՀ դրամ:

6)Առաջին վարձակալական վճարումը կատարվում է ոչ ուշ, քան պայմանագրի ուժի մեջ մտնելուց 10 օրվա ընթացքում:

7)Վերջին վարձակալական վճարումը կատարվում է ոչ ուշ, քան մինչև պայմանագրի գործողության ժամկետի վերջին ամսվա 25-ը:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ **ԱՐԹՈՒՐ ՍՏԵՓԱՆՅԱՆ**

2023 թ. դեկտեմբերի 7 ք.Եղեգիս

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶԻ ԵՂԵԳԻՍ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Վայոց Ձորի մարզի Եղեգիս համայնք
ՀՀ, Վայոց Ձորի մարզ, ք.Եղեգիս, (0281) 99282, shatin.vayotsdzor@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

07 ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 2023 թվականի N 283 Ա

ԵՂԵԳԻՍ ՀԱՄԱՅՆՔԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՍԱՀՄԱՆՆԵՐՈՒՄ ԳՏՆՎՈՂ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ՀՈՂԱՏԵՍՔԵՐԸ ԱՃՈՒՐԴՈՎ ՕՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով 20-ը նոյեմբերի 2023թ. և 04-ը դեկտեմբերի 2023թ.արձանագրությունները հողամասի՝ աճուրդով վաճառքի արդյունքների մասին, Եղեգիս համայնքի ավագանու 31/05/2023թ. թիվ 65Ա, 20/09/2023թ. թիվ 117Ա, 27/10/2023թ. թիվ 136Ա, 27/10/2023թ. թիվ 137Ա որոշումները, ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 16-րդ, 24-րդ կետերով և Հայաստանի Հանրապետության «Հողային օրենսգրքի» 70-րդ հոդվածի 2-րդ կետի պահանջներով

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ Ե Մ

1.Հայաստանի Հանրապետության Վայոց ձորի մարզի Եղեգիս համայնքի Շատին գյուղի վարչական սահմաններում գտնվող համայնքային սեփականություն հանդիսացող գյուղատնտեսական նշանակության այլ հողատեսքը (կադաստրային ծածկագիր 10-035-0231-0082, մակերեսը 0.1479հա) 105000 (մեկ հարյուր հինգ հազար) ՀՀ դրամով վաճառել Շատին գյուղի բնակիչ Աղասի Ղուկասի Խանոյանին:

2.Հայաստանի Հանրապետության Վայոց ձորի մարզի Եղեգիս համայնքի Եղեգիս գյուղի վարչական սահմաններում գտնվող համայնքային սեփականություն հանդիսացող գյուղատնտեսական նշանակության այլ հողատեսքը (կադաստրային ծածկագիր 10-021-0107-0036, մակերեսը 1,4հա) 198450 (մեկ հարյուր իննսունութ հազար չորս հարյուր հիսուն) ՀՀ դրամով վաճառել Երևան քաղաքի բնակիչ Արթուր Ռաֆայելի Կարապետյանին:

3.Հայաստանի Հանրապետության Վայոց ձորի մարզի Եղեգիս համայնքի Եղեգիս գյուղի վարչական սահմաններում գտնվող համայնքային սեփականություն հանդիսացող գյուղատնտեսական նշանակության այլ հողատեսքը (կադաստրային ծածկագիր 10-021-0106-0009, մակերեսը 1,17305հա) 249421 (երկու հարյուր քառասունիննը հազար չորս հարյուր քսանմեկ) ՀՀ դրամով վաճառել Երևան քաղաքի բնակիչ Արթուր Ռաֆայելի Կարապետյանին:

4.Հայաստանի Հանրապետության Վայոց ձորի մարզի Եղեգիս համայնքի Գողթանիկ գյուղի վարչական սահմաններում գտնվող համայնքային սեփականություն հանդիսացող բնակավայրերի նշանակության այլ հողատեսքը (կադաստրային

ծածկագիր 10-018-0008-0006, մակերեսը 0.22972հա) 342300 (երեք հարյուր քառասուներկու հազար երեք հարյուր) ՀՀ դրամով վաճառել Քարագլուխ գյուղի բնակիչ Մխիթար Աշոտի Հայրապետյանին:

5.Անշարժ գույքերը օտարելու համար օրենքով սահմանված ժամկետում և կարգով կնքել օտարման պայմանագրեր:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ **ԱՐԹՈՒՐ ՍՏԵՓԱՆՅԱՆ**

2023 թ. դեկտեմբերի 7 ք.Եղեգիս

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶԻ ԵՂԵԳԻՍ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Վայոց Ձորի մարզի Եղեգիս համայնք
ՀՀ, Վայոց Ձորի մարզ, ք.Եղեգիս, (0281) 99282, shatin.vayotsdzor@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

07 ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 2023 թվականի N 284 Ա

«ՄԲՑ» ՓԲ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆԸ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՊԱՏԿԱՆՈՂ ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԸ ՎԵՐԱՀԱՍՑԵԱՎՈՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 22-րդ, 24-րդ կետերով և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության Կառավարության 29-ը դեկտեմբերի 2005 թվականի թիվ 2387-Ն որոշման 63-65-րդ կետը, կադաստրի կոմիտեի կողմից հաստատված հայտի քաղվածքի 10035JQBMDM5 ծածկագիրը

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ Ե Մ

1.Եղեգիս համայնքի Շատին գյուղի վարչական սահմաններում գտնվող «ՄԲՑ» ՓԲ Ընկերությանը սեփականության իրավունքով պատկանող բնակավայրերի նշանակության բնակելի կառուցապատման հողատեսքին և բնակելի տանը (կադաստրային ծածկագիր՝ 10-035-0041-0012, մակերեսը՝ 0,2 հա) տրամադրել Եղեգիս համայնք, գյուղ Շատին 3-րդ փողոց, 7-րդ փակ., տուն 7/1 հասցեն:

2.Չեղյալ համարել նախկինում տրված՝ «Վայոց ձորի մարզ, գ. Շատին փ 3 փակ 1 տ 4» հասցեն:

3.Սույն որոշումը ենթակա է գույքային իրավունքի պետական գրանցման:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ԱՐԹՈՒՐ ՍՏԵՓԱՆՅԱՆ

2023 թ. դեկտեմբերի 7 ք.Եղեգիս

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶԻ ԵՂԵԳԻՍ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Վայոց Ձորի մարզի Եղեգիս համայնք
ՀՀ, Վայոց Ձորի մարզ, ք.Եղեգիս, (0281) 99282, shatin.vayotsdzor@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

07 ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 2023 թվականի N 285 Ա

ՇԻՆԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով, 42-րդ հոդվածի առաջին մասի 6-րդ կետով և Հայաստանի Հանրապետության կառավարության 2015 թ. մարտի 19-ի թիվ 596-Ն որոշմամբ հաստատված կարգով

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ Ե Մ

Տալ շինարարության թույլտվություն քաղաքացի Շահանդուխտ Բաբայանին՝ իր սեփական հողամասում (կադաստրային ծածկագիր՝ 10-021-0025-0022) բնակելի տան կառուցման համար:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ԱՐԹՈՒՐ ՍՏԵՓԱՆՅԱՆ

2023 թ. դեկտեմբերի 7

ք.Եղեգիս

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶԻ ԵՂԵԳԻՍ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Վայոց Ձորի մարզի Եղեգիս համայնք
ՀՀ, Վայոց Ձորի մարզ, ք.Եղեգիս, (0281) 99282, shatin.vayotsdzor@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

07 ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 2023 թվականի N 286 Ա

ԱՎԱՐՏԱԿԱՆ ԱԿՏ (ՇԱՀԱԳՈՐԾՄԱՆ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ) ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության Կառավարության 2015 թվականի մարտի 19-ի N 596-Ն որոշման դրույթները

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ Ե Մ

1.Եղեգիս համայնքի Գողթանիկ, Հորս և Սալլի գյուղերում կառուցված խմելու ջրի ցանցի կառուցման աշխատանքները ավարտելու համար Եղեգիսի համայնքապետարան տալ ավարտական ակտ (շահագործման թույլտվություն):

2.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ԱՐԹՈՒՐ ՍՏԵՓԱՆՅԱՆ

2023 թ. դեկտեմբերի 7 ք.Եղեգիս